



Կընդգրկուի միայն տիպարային
 Գրքերն էն ի կէսն ,
 Տարեկան գինն 24 շաբաթուրդ .
 Սխմանայ 12 շաբաթուրդ .
 Սէյ հարկ 40 ժառանգ .

Լ Ր Ե Տ Ե Ր

Որ ինչն ալ ինչն իսկողանքներն
 Դուրս ելնալիս Լազարեան
 Խմբագիրը պիտի ճամբէ :
 Լազարեան վերաբերեալն ինչ
 ալ խմբագիրը պիտի աղաչուի :

Լ Ր Ե Տ Ե Ր Ս Ե Ր Օ Ն Ա Յ

ԹՈՒՌՆԵՐԸ, ԹԵՒՈՒՐ ՎԵՍՊՈՒՐԵԿԱՆ ԼՐԵՍՏՈՅՆ
 Ի ՄԵՄԻՆԵՆԵՆ ԲԱՆԴԱՅԻՆ ՅԻՆԱԿՆԵՆ ԼԵՐԱՅ
 Ի ՄԵՄՈՅ Ս. ԿԵՐԵՊԵՏԻ ՀԲԵՐԸԻ ՈՒՍԵՆ :

Լ Տ Ե Ր Ի Թ Ի Ի 1 3

1 8 6 3 .

ՀՈԿՏԵՍԻՆԻ 1

ԼԵՏԵՒՈՐ ՆԵՍԵԿՄԵՐ

1863 Սիպ . 7 ի Կարին :

Լազարեան Խմբագիր

Ինքնուրոյն խմբագրող Լազարեան Լազարեան
 ծնունդ առաւելան լրագրող միջոցաւ սի-
 րիւն եւ Սահմանադրական Լազարեան հե-
 տեւեալ ուրախալի բարձր, թաւադէք իցըն-
 ծաւ թիւն Հայ սրտից :

Սիպ . 5 ին Կարնոյ Գեր. արքայազան ա-
 ռաքնորդին Վաթրիարքարանի վարչութեան
 կողմանէ գաւառական վարչութեան թաղա-
 կան խորհրդոյ հրահանգին ստացաւ, ուստի
 առանց ժամանակ կորսնցնելու հետեւեալ
 օրը փութացաւ տեղւոյս քաղաքական եւ
 քննական ժողովմբ գումարել եւ հաստա-
 տել օրինաւորապէս. յիշեալ ազգօգուտ մո-
 ղովոյն հաճութեամբ Սահմանադրութեան
 քործադիր օգնական ժողովմբ ընտրելով եր-
 կու գործունեաց եւ բանիբուն Լեւոնեայ-
 կան եւ հինգ ազգատէր եւ աշխատակ-
 արարհանքն անձինք, որոց նախագահեց
 արքայան Առաքնորդին անձամբ, տոննա-
 ղարու թեան փափուկ պաշտօնն ալ ժողովա-
 կանաց մեծագոյն մասին հաճութեամբն

քաղաքի գործատանց պատուաւոր դասա-
 տեւներէն խիստ արժանաւորագունին եւ
 առաջին դասատուն յանձնուեցաւ :

Ենթադրեալ այս սղգանկաւոր ժողովի պի-
 տի իմացունէ քուէտաւոր ժողովականաց, որ-
 պէս զի ուշադրութեամբ արժանաւորա-
 գունին տան իրենց քուէներն, եւ ուշի ու-
 շով ու խիստ լաւ քննելով հասկնան, թէ
 այն անձնորք ընտրելու համար քուէ կու-
 տան, ստուգիւ եւ ճշմարիտ կ'օրէ՞ իւր
 աղջը եւ կ'ազգայն իսրաէ անձնանուէր
 ծառայել իւր ազգին ևն : Ուստի, Տէր
 մի արաքե, եթէ զուրկ գտնուողն ընտր-
 ուի, անտարակոյս ազգին վրայ անտանկի
 եւ աւելորդ բեռնը պիտի ըլլայ, եւ պի-
 տի գործէ ի վնաս ազգին :

Եւստի կ'մերջնանք, ազգատէր Լազա-
 րեան, ամենայն փափաքանք եւ ըզձիւք սպա-
 սելով ի գործ դուրսէլք Սահմանադրական
 կարգադրութեանց ի նկատման ազգընտիր եւ
 ազգատէր գործադիր օգնական ժողովոյ :

Ընայժմս կ'բաւականանամք միմիայն նշ-
 շանակելով օգնական ժողովոյ մեծարգոյ ան-
 դամոյ անուանքն, շնորհաւորելով եւ ի քա-
 լոց սրտէ բարեմաղթելով յաջողութեան և
 համաձայնութեան ի գործադրութիւն ազ-
 գանպատ խորհրդոյս :

Նախագահ՝ գերապատիւ Յարութիւն Ս. Արքեպիսկոպոսն :
 Բաւականալիս՝ պատուելի Կարապետ վարժապետ Ս. Օրբարեան :

Անդամք

Արժանապատիւ Տ . Անդրէաս - Քահանայ Պաշտօնական
 " " " Տ . Գրիգոր - Քահանայ Տ . Սինասեան , Բ .
 Սեծարդոյ Դարար Աղայ Լորսմեան
 " " " Դանիէլ Աղայ Խորաջեան
 " " " Գէորգ Աղայ Սկրտիչեան
 " " " Լղիշէ Աղայ Գաղէզեան
 " " " Սողոմոն Աղայ Աճմեան

Սեմա եւ այլն . Վ . Ա . Բնթերցարանի .

Պ . Ս . Օձնեցի :

Յնձու թիւն ամէն Հայ ազգասիրաց . յոյս յառաջագիմութիւն եւ երանութիւն Կարնոյ Ազգայնոց . Ճշմարիտ պարծանք Կարնոյ սրբազան Առաջնորդին . ահա նոր գտաւ իւր պարտաւորութիւն միանգամայն եւ փառաւորութիւն . կ'ցանկանք յարատեւ եւ արդիւնաւոր լինի եւ ուրիշ տեղերու Առաջնորդաց ինք զինքը գեղեցիկ օրինակ բնծայէ :

Օանազան տեղեկութիւնք .

Այն եւ Բաղիշոյ Գայմագամ վսեմ . Ահեղ փաշան անցեալ շաբթըններ անձամբ այցելութեան ելած էր Առաքաւրայ եւ Գաշաի գիւղօրայքը , բարեօրոտ փաշան տեսնելով գիւղացւոց շատերու խեղճութիւնը եւ քաջած վնասները մարտիկ երեսէն , որով գրեթէ ըստ մեծի մասին առապետները անթիւ եւ շիւար մնացած են , շատերը փախան գնացին , ոմանք ալ գնալու կ'պատրաստուին . հաճեցաւ շնորհումներ անել այն գեղերուն եւ այն անձանց . Եւսեւ Խորաջեանը գեղերը իւր իսկական արածնագիրը ձգեց . որ ոչ ոք առանց ըստակի ձրի հաց , կամ հաւ , կամ ոչխար կամ որ եւ իցէ բան առնէ ուտէ գեղերէն՝ բաց ի ջրէն . թէ զինուոր է եղեր . թէ զաւթեալ թէ իշխան , թէ ճանապարհորդ եւ այլն :

Տերութեան այս օրէնքը ամէն աշխարհի մէջ ի վաղուց գործադրուած էր . բայց խլաճալի Սուլթան Թալիսկան անտեսանելի եւ անգործող լինելի մնացած էր , զոր իրաւասիրութեամբ եւ բարեօրոտութեամբ կ'ստատանայ վսեմ , Ահեղ փաշան ի գործ դնել . որոյ վասն արդէն պարտաւորեալ ի հոգի բոլոր ժողովուրդ գոհութիւնք եւ օրհնութիւնք կ'նուիրեն առ Աստուած վեհափառ

սուրբան Ապտիւ Լղիզ կայսեր կենաց եւ վսեմ , Ահեղ փաշային :

Սեպ . 19ին ի Ս . Կ . վանքս եկաւ նորին Սեմա թիւն . մեծ պատիւ եւ ուրախութիւն առթեց բոլոր ուխտիս . անձամբ շրջեցաւ վանքիս ամէն տեղերը . անմիջապէս այցելութիւն գնաց ուսումնարանին . աշակերտք բարեմաղթութիւնները երգեցին վեհափառ Կայսեր եւ նորին Սեմա թեան . մեծ ուրախութիւն յայտնեց ուսումնարանի բարեկարգութեան , եւ քաջալերութիւն տուաւ աշակերտաց յառաջագիմութեան . գովելով միանգամայն եւ զգերապատիւ Առաջնորդին Հայրիկ եւ իւր ձեռնարկութիւնները . Հետեւեալ օր մանկանց հրգատողութեամբ եւ յարգական մեծարանք մեկնեցաւ ի Սուլթ . պարգեւներ բաշխելով աշակերտաց եւ շնորհակալ լինելով Ս . Ս . խոյս միաբանութենէն եւ Արժ , փառանորդ Գրիգորիս վարդապետէն :

Սեպ . 14 : Ս . Խաչի նաւակատեսաց շաբաթ օր ի Ս . Կ . վանքս ժամանեցին Լորուսաղէմոյ միաբան գերապատիւ Կարապետ եւ Հակոբէ սրբաբանները . օրոնք ի Ս . Լ . ջրհածին գնալով եւ վեհափառ Կաթողիկոսէն Լալիսկոպտութեան բարձր ստորձանն ընդունելով վերադարձան . բոլոր միաբանութիւն Ս . ուխտիս վարդապետք եւ աշակերտք զիմաւորեցին նոցին Արքազնու , թեանց եկեղեցական զգեստներով ու զար

դերով . եւ շորթսո . խաչ , զաւսդ ան տալով
երգասացու թեամբ րերին ի Ս . տա ծար :

Հետեւեալ առաւօտ հանդիսաւ որ պա-
տարագ մատոյց Յակովբ սրբազան . եւ օրհ-
նութիւն ու քարոզ կարդաց , երեկոյ ալ
խաչվերացի հանդէսը կատարեց :

Գծադրաբար կարապետ սրբազան փոքր
ինչ անձնական տկարութիւն ունէր . Յա-
կովբ սրբազան ի Ս . Առաքելոց եւ Ս . Յով-
հաննու վանքերը ուխտի գնաց եւ վերա-
դարձաւ . տանն օր հիւր մնացին ի Ս . կա-
րապետ . առանձին առանձին այցելութեան
գնացին վանքիս յ . ուսու մնարանը եւ աչ-
քէ անցուցին աշակերտաց ուսմունքները .
քաջալերա եւ օրհնութիւն կարդացին թէ
ուսուցչաց եւ թէ ուսանողաց . նաեւ շնոր-
հակալութիւն քարեմաղթութիւնք նուր-
բեցին ազգասէր Հայրիկին :

Ի վերջոյ Յակովբ սրբազան իւրաքան-
չիւր աշակերտաց առանձին զմեկներ րաշ-
խեց հատ հատ :

Սեպ . 22 . Ս . Խաչի յաջորդ կիրակին Ս .
կարապետիս թեմական ռեւներ , երեսփո-
խաններ եւ համբաններ ի վանքս հրաւիրե-
ցան . որոց ի ներկայութեան դպրոցական
հանդէս եւ ուսմանց քննութիւն եղաւ
երգերով եւ ծառերով . հանդիսիս ներկայ
էին նաեւ Ս . Երուսաղէմայ կարապետ եւ
Յակովբ սրբազանները . եւ ուխտիս պատու-
արժան միաբանութեան քանիմ վարդա-
պետները :

Րասրեաներն էին , Աւետարան
աշխարհաբառ զտրձունել եւ վերլուծել .
Սրբազան պատմութիւն , Բրիտանիական
վարդապետութիւն , Հայոց պատմութիւն
եւ այլ մանր հարց պատասխանիք . Հայաս-
տանի , Եւրոպայի եւ Ամերիկէի աշխարհա-
դրութեան աւխտակները , ու թուրքաւու-
թիւնն :

Իւրաքանչիւր առարկայի վրայ բացա-
տրութիւն եւ խորհրդաւոր խօսքեր կը
խօսուէր հանդիսականաց պարզ իմաստնե-
րով , որ կարող լիէին հասկնալ . ապա ծառ
կը կարդացուէր եւ երգ կ'երգուէր :

Իբրեւ նորահաս պարտիզիմը նոր բաց-
ւած ծաղիկներ նոր տեսնող հանդիսակա-
նաց ներկայացաւ այս հանդէս . որոյ վրայ
արդարեւ քաղցրութեամբ զմայլեցան :

Ի վերջոյ բանաստեղծութիւնը եղաւ հա-

մառօտ պարզ եւ քաղցր ռճովմը Տարօնոյ
նսխին Հայոց , յեռնոց եւ նորոց ցրութեան
վրայ . ուսման օգտակարութեան , ժամանա-
կիս յուսաւորութեան , իրարու հեռ միու-
թեան , իրարու համար օգնութեան , նաեւ
քարեմաղթութիւնները նուիրեցան ազգի
համար հին եւ նոր աշխատողաց , վարժա-
րանիս նսխին հիմնադրոց եւ քարերա-
րաց . մասնաւորապէս Հայրիկի խնամակա-
լութեանց . Նա եւ քահանայութիւնք մատու-
ցան հանդիսական սրբազանից . միաբանաց
եւ առ հասարակ ամենից . որք իրենց ներ-
կայութեամբ շքեղացուցին նորն աւուր
հանդէսը . պատիւ ընծայեցին ուսու մնարա-
նիս . քաջալերա ուսանողաց , եւ ուսման
թեան յոյսեր առին իրենց :

Գերապատիւ Սրբապետ Սրբազան պը-
տակեց այս հանդէսը . օրհնելով , դովելով եւ
յոյսեր ընծայելով : Ուսման յարգը ծան-
շընալ . ուսու մնարաններ բանալ . եղած ու-
սու մնարաններու վրայ խնամք ունենալ
յորդորեց . ցոյց տալով թէ « Բարձրութիւն
իմաստնոց փրկութիւն է աշխարհիս » . բա-
ցատրելով մի ըստ միովէ ուսու մնականու-
թեան բարեքներ եւ աղիտութեան չարիք-
ները :

Թեմական հանդիսականք զուարթ եւ շը-
նորհակալու սրտիւ նայեցան ուրխացան
նաեւ վարժարանիս եւ վանքիս նիւթական
բարեկարգութեանց վրայ :

Անցեալ () դոս . 23 ին (1) ի կարին
նըստող Ուսաց դեսպանին երկրորդական
կամ անդապահ Գանձիլար բաղձրաստիճան
Իւանով պէյն բազմահմուտ եւ հնազէտ
ուսու մնական անձը ի Ս . կ . վանքս ժամա-
նեց կտրինէն . եւ գծադրաբար անձնա-
կան տկարութիւն պատահելով ութն ա-
ւուր չափ անգոս մնաց . քաջ անդեկութիւն
ունէր Հայոց պատմութեան եւ Հայաստա-
նի հնութեանց վրայ . ուստի եւ երբեմն
երբեմն ուսու մնարան այցելութեան կեր-
թար եւ շատ կ'սիրէր հարցանել սրբազան
եւ ազգային պատմութեանէն , աշխարհագը-
րութեան տախտակներէն . եւ ըստ բաւա-

11 (Թող ներհն արքոյ ընթերցողք , որ այս-
պիսի լուրեր ժամանակին յետս կ'մնաւք
հրատարակել . ասոր առիթ թերթիս անձ-
կութիւնն է)

Վանի համարձակ եւ ուղիղ պատասխանները
առանալով յատկապէս իր ուրախութիւնը
յայտնեց. եւ պարգեւներ բաշխեց :

Օրոս . 31 ին մեկնեցաւ տեղէս ուրիշ
վանքերը, ի Մուշ եւ ի Բաղէշ երթալու ,
այն տեղերու հետ թեանց վրայ աչք ձգել :

Սօտկանէն հետեւեալը կ'գրեն :

Ստեմ. Իսմայիլ պէյը տեղւոյս քրդերու
բարդարութիւնը բոլորովին զսպեց . աշ-
խարհը բարեկարգեց եւ ապստամբները հը-
պատակեցուց : Սօտկանու քրդերը որ մին-
չեւ ցարդ թլիստուծիւն (սիւնաթ) չե-
ին գիտեր, զանոնք նորէն ճշմարիտ Իսլամ
ըրաւ Իսմայիլ պէյը. թլիստի տալով մին-
չեւ անգամ եօթանասուն տարեկան մար-
դիկը :

Իսմայիլ պէյն ամիսէմը աւելի է տեղէս
մեկնեց եւ Բաղիշոյ քով Գնծնու գիւղ
գնացերէ. այն կողմի ապրտամբ քրդերն
ալ զսպելու :

Իւր փոխանորդ Թողուցած է այս կողմեր
զօրաց մէկ մասի հետ հազարապետմը :
Այս հազարապետ իմանալով որ ժամանա-
կաւ Բօկնուտ գիւղէն Օջրիկ անունով
Հայմը արծնթի հանգ գտեր եւ գործա-
ծեր է. կանչել տուաւ այն Օջրիկի աղան
եւ ստուգելով գնացին զննեցին գտան ,
եւ փորձեցին որ պատուական հանգ է :

Այս հանգը Սօտկանու անտառախիտ
լեռներու մէջն է. որ Սասուն ալ կ'ընտելի :

Ուրախ եմք Տէրութեան զանձուն այս
նոր գիւտին վրայ . զոր հայաստանի ար-
գանդը կ'ծնանի :

Արծուիկ եղաւ կէս տարեկան

Աստուծոյ փառք ազգասիրաց խնամք
որ ծնան զԱրծուիկ . սնուցին, սիրեցին ,
գըղթեցին, զխեցուցին մինչեւ այսօր հա-
տուցին :

Արծուիկ այսօր կէս տարեկան է . բայց
իր հասակէն վեր ուժով կ'ըլլայ . ուրախ է
համարձակ է. կ'կայտառի, կ'բերկրի իւր ման-
կական տիօք, վանդի իր յուսացածէն ա-
ւելի շնորհքներ ու խնամքներ գտաւ աղ-
ղէն. բաւական տեղերը թռչտաւ . թեւերը
պարզեց, ձայնը կ'կկոխայ, եւ ուր որ գնաց
սէր ու ընդունելութիւն վայելից :

Այսօր յաշտ աշխարհի կ'ըլլէ Արծուիկ
իւր տարեկան եւ սիրով հոգնեցնէ լը-

նորհակալ լինել . թէ բաժանորդներէն եւ
թէ գործակալներէն, իր խորին եւ անկեղծ
յարգանքը գոհութեամբ հանդերձ նուի-
րելով անոնց :

Կը ցանկար լ'ընտելի որ իւր բաժանոր-
դաց յարգելի անուանքն մի առ մի բառ-
նար իւր թեւոց վրայ եւ թռուցանէր. բայց
ուսերը նեղ՝ մէջք բարակ լինելով՝ կ'աղա-
չէ որ ներողամիտ լինին. եւ առ այժմ բա-
ւական համարինք զանկերու գոհմարը եւ
ղործակալաց անուանքը հրատարակել :

150 Բաժանորդք ի Կ. Պօլիս :

Գործակալն է Լրժ . Գեւորդ վարդա-
պետ քարոզիչ հայրց Ս . Իսաաւրիչ եկե-
ղեցոյն . Գալաթիա :

20 Բաժանորդք ի Տրապիզոն :

Գործակալն է Արգոյ Պ . Ստեփան Ս .
Յակովբեան :

28 Բաժանորդք ի Կարին :

10 " " Ալքիւկայ :

10 " " Աւին :

10 " " Ահապէներ (7 թիւէն
ըսկեսալ) :

Գործակալն է Արգոյ Պ . Պետրոս Ս .
(ձեռքի վերտեսուչ ընթերցարանին ԱԷ
ընկերութեան . Ի Կարին :

54 Բաժանորդք ի Մուշ Աւան :

20 " " Ի Խնուս :

Գործակալն է Լրգոյ Պ . Մէլքոն Քէ-
շիշեանց . տրա ձեռքով կ'ըրկուին նա եւ
20 բաժին ի Պուլմըն :

Գործակալն է Արգոյ Պ . Յարութիւն
Տ . Յակովբեանց . որ Վարադայ Ժ . դասէն
Արծույ ձողուց երամէն մէկը կ'համարուի :

10 բաժին Ս . Յօհ . վանուց թէմերը :

Գործակալն է Լրժ . Պաղտատար վար-
դապետ միարան նոյն վանուց :

44 Բաժանորդք ի Վան :

Գործակալն է Արգոյ Պ . Ս . Մտովմեան :

10 Բաժանորդք ի Կարին եւ Ալքիւկայ :

Գործակալն է Լրժ . Տ . Ստեփան բա-
հանայ, Տ . Թովմոսեանց :

10 Բաժին ի Ս . Կարապետի վանքս :

4 Բաժանորդք ի Օլախաթ գիւղ :

Գործակալն է Լրգոյ Պ . Գասպար Տ .
Պաւլթեանց :

Խմբագիր Տարօնոյ Արծուիկիս
Գ . Ստեփանեանց, Ղեւո Ս . Արծուցն .
Ի Տարաբանի Ս . Արծուցն ի Տարօն :